ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԱՅԻՆ ՄԱՍԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ-ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/44

ք. Սպիտակ «13» հունվար 2023թ.

Սպիտակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ք. Նիկողոսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՍՏՐՈԼԱԲ» ՍՊԸ -ն -ն, ի դեմս տնօրեն Ա. Մելիքյանի, որը գործում է «ԱՍՏՐՈԼԱԲ» ՍՊԸ -ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սպիտակ համայնքի Նոր Խաչակապ բնակավայրի վարչական շենքի մանկապարտեզային մասի վերանորոգման-արդիականացման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է մինչև 180 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված գնման ժամանակացույցով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. Համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. Չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 8 371 200 (ութ միլիոն երեք հարյուր յոթանասունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որից 1 395 200 (մեկ միլիոն երեք հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[3] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

---

[3] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 1. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8.15** Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակի համայնքապետարան
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242001452
Համայնքի ղեկավար՝ Ք. Նիկողոսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՍՏՐՈԼԱԲ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Համբարձումյան 13/104
ՀՎՀՀ 06956366
Հ/Հ 2051422106291001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

---------------------------
Ա. Մելիքյան

Կ.Տ.

Հավելված թիվ 1
«13» հունվար 2023թ կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/44 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

*ՀՀ Լոռու մարզ, համայնք Սպիտակ, գյուղ Նոր Խաչակապ 2-րդ փողոց, թիվ 26/1 հասցեի վարչական շենքի մանկապարտեզային մասի վերանորոգման-արդիականացման*

| | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | Միավ. գինը հազար դրամ | Ընդամենը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | - | - | - | | |
| | <u>*քանդման աշխատանքներ*</u> | - | - | | |
| 1 | տանիքի ասբոշիֆերի ծածկույթի ապամոնտաժում | 100մ² | 1.38 | 24.000 | 33.120 |
| 2 | տանիքի փայտայնութի նեխած մասի ապամոնտաժում | մ³ | 0.6 | 29.000 | 17.400 |
| 3 | տանիքի պիպի ծածկույթի քանդում ցինկապատ թիթեղից/31գծմ/ | 100մ² | 0.102 | 11.000 | 1.122 |
| 4 | բացվածքի մեծացում քարե պատում | մ³ | 1.1 | 9.706 | 10.677 |
| 5 | քարե պատերի ապամոնտաժում հանձնելով պատվիրատուին | մ³ | 8.7 | 9.706 | 84.442 |
| 6 | փայտե դռների ապամոնտաժում | 100մ² | 0.136 | 141.473 | 19.240 |
| 7 | փայտե պատուհանների ապամոնտաժում | 100մ² | 0.09 | 236.536 | 21.288 |
| 8 | գաջի սվաղի քանդում պատից | 100մ² | 0.156 | 21.089 | 3.290 |
| 9 | պատերի սոսնձաներկի քերում մաքրում | 100մ² | 3.10 | 17.835 | 55.289 |
| 10 | առաստաղի սոսնձաներկի քերում մաքրում | 100մ² | 0.825 | 17.835 | 14.714 |
| 11 | շին աղբի բարձում ձեռքով ինքնաթափին | մ³ | 3.0 | 1.033 | 3.099 |
| 12 | շին աղբի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ. | տն | 5.40 | 1.943 | 10.492 |
| | <u>*Հատակներ*</u> | - | - | | |
| 1 | Ցեմ. ավազային հարթ շերտի կառուցում 30մմ հաստ. | 100մ² | 0.825 | 149.150 | 123.049 |
| 2 | Հատակի կառուցում լամինատից 8մմ հաստ /շրիշակով,սալունգով/ | մ² | 72.0 | 4.080 | 293.760 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | հատակներ կերամիկական սալիկներից սոսնձի վրա | մ² | 10.5 | 7.774 | 81.627 |
| 4 | լամինացված շրիշակների տեղադրում 8սմ բարձր. | 100մ | 0.15 | 133.064 | 19.960 |
| | *Միջնորմներ* | | | | |
| 1 | Միջնորմների շարում թեթև բետոնե բլոկներով n=10սմ | մ³ | 2.2 | 32.144 | 70.717 |
| 2 | Ամրան Φ6 A240 | տոն | 0.007 | 583.006 | 4.081 |
| 3 | Ամրան Φ8 A240 | տոն | 0.0100 | 583.006 | 5.830 |
| 4 | Միաձույլ ե/բ բարավորների կառուցում B 15 բետոնով | մ³ | 0.03 | 81.522 | 2.446 |
| 5 | Ամրան Φ12 A500C | տոն | 0.003 | 388.671 | 1.166 |
| 6 | Ամրան Φ6 A240 | տոն | 0.001 | 583.006 | 0.583 |
| 7 | հորիզոնական անցքերի շաղափում պատերում բացվածքի ամրացման համար Φ10 L-400մմ | 100 հատ | 0.24 | 30.659 | 7.358 |
| 8 | խարսխաձողեր Φ8A240 | կգ | 6.00 | 0.583 | 3.498 |
| 9 | բացվածքի ամրացում L100x100x8 պողպատե անկյունակով | տոն | 0.198 | 71.550 | 14.167 |
| 10 | պողպատե անկյունակի արժեքը L100x100x8 | մ | 15.60 | 8.678 | 135.377 |
| 11 | շերտապողպատի արժեքը -40x4 | մ | 5.60 | 0.939 | 5.258 |
| 12 | ամրանային ցանց Φ3Bp-1 /100x100մմ/ | մ² | 5.60 | 0.869 | 4.866 |
| 13 | պատերի տորկրետացում 5 սմ հաստ. | մ² | 5.60 | 5.564 | 31.158 |
| 14 | ց/ա շաղախ | մ³ | 0.280 | 40.765 | 11.414 |
| 15 | հորիզոնական անցքերի շաղափում պատերում Դ-1 դռան բացվածքի ամրացման համար Φ10 L-300մմ | 100 հատ | 0.12 | 30.659 | 3.679 |
| 16 | խարսխաձողեր Φ6A240 | կգ | 1.4 | 0.583 | 0.816 |
| 17 | բացվածքի ամրացում պողպատե ձողերով | տոն | 0.198 | 71.550 | 14.167 |
| 18 | Ամրան Φ6A240 | կգ | 3.0 | 0.583 | 1.749 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 19 | Ամրան Φ12 A500C | տն | 0.016 | 388.671 | 6.219 |
| 20 | ց/ա շաղախ անցքերի ներարկման համար /36 հատ/ | մ³ | 0.050 | 40.765 | 2.038 |
| | *Պատեր* | | | | |
| 1 | Պատերի կառուցում ուղիղ կտրվածքի տուֆ քարով օգտագործելով ապամոնտաժածը | մ³ | 1.70 | 17.480 | 29.716 |
| | *Հարդարման աշխատանքներ* | - | - | | |
| 1 | պատերի լավորակ սվաղում գաջի շաղախով | մ² | 28.1 | 2.338 | 65.698 |
| 2 | առաստաղի բահարթում գաջե շաղախով | մ² | 6.0 | 0.752 | 4.512 |
| 3 | պատերի բահարթում գաջի շաղախով | մ² | 62.0 | 0.664 | 41.168 |
| 4 | շեպերի լավորակ սվաղում գաջե շաղախով | 100մ² | 0.06 | 381.425 | 22.886 |
| 5 | արտաքին շեպերի սվաղում ց/ավազային շաղախով | մ | 25.0 | 0.702 | 17.550 |
| 6 | պատերի սվաղում ց/ա շաղախով | մ² | 39.9 | 1.848 | 73.735 |
| 7 | պատերի և շեպերի ներկում ջրադիսպերսիոն ներկով ծեփամածկումով | 100մ² | 3.100 | 90.079 | 279.245 |
| 8 | առաստաղի ներկում ջրադիսպերսիոն ներկով ծեփամածկումով | 100մ² | 0.825 | 103.561 | 85.438 |
| 9 | առաստաղների երեսապատում խոնավակայուն գիպսաստվարաթղթե սալերով | մ² | 4.50 | 4.389 | 19.751 |
| 10 | պատերի երեսապատում կերամիկական սալիկներով | 100մ² | 0.39 | 669.640 | 261.160 |
| | *Բացվածքներ* | - | - | | |
| 1 | մետաղապլաստե արտաքին խուլ դռան տեղադրում 60մմ հաստ/ /հայկական պրոֆիլ/ | մ² | 0.90 | 41.028 | 36.925 |
| 2 | մետաղապլաստե արտաքին ապակեփաթեթով դռան տեղադրում 60մմ հաստ/ /հայկական պրոֆիլ/ | մ² | 1.50 | 41.028 | 61.542 |
| 3 | մետաղապլաստե խուլ դռների տեղադրում 60մմ հաստ/ /հայկական պրոֆիլ/ | մ² | 12.20 | 41.028 | 500.542 |
| 4 | մետաղապլաստե ապակեպատ դռների տեղադրում 60մմ հաստ/ /հայկական պրոֆիլ/ | մ² | 4.00 | 41.028 | 164.112 |
| 5 | Մետաղապլաստե ապակեփաթեթով բացվող պատուհանների տեղադրում 4x4մմ ,պրոֆիլի հաստ. 60մմ /հայկական պրոֆիլ | մ² | 3.960 | 30.077 | 119.105 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | Մետաղապլաստե ապակեփաթեթով չբացվող պատուհանների տեղադրում 4x4մմ պրոֆիլի հաստ. 60մմ /հայկական պրոֆիլ/ | մ$^2$ | 3.360 | 20.360 | 68.410 |
| 7 | Մետաղապլաստե ապակեպատ ցուցափեղկի տեղադրում պրոֆիլի հաստ. 60մմ /հայկական պրոֆիլ/ | մ$^2$ | 4.68 | 20.360 | 95.285 |
| 8 | Մետաղապլաստե խուլ ցուցափեղկի տեղադրում պրոֆիլի հաստ. 60մմ /հայկական պրոֆիլ/ | մ$^2$ | 2.340 | 20.360 | 47.642 |
| 9 | պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում | 100մ$^2$ | 0.08 | 86.984 | 6.959 |
| 10 | պլաստմասե պատուհանագոգերի արժեքը 300մմ լայն. | մ | 6.5 | 3.333 | 21.665 |
| | ***<u>Տանիք</u>*** | - | | | |
| 1 | Տանիքի փայտե հիմնակմախքի էլեմենտների տեղադրում | մ$^3$ | 0.6 | 219.480 | 131.688 |
| 2 | Տանիքի փայտե կոնստրուկցիաների մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթով | մ$^3$ | 0.6 | 6.715 | 4.029 |
| 3 | Տանիքի ծածկույթի իրականացում ցինկապատ գ/պրոֆիլավոր թիթեղից ԿՊ-25-0.55 | 100մ$^2$ | 1.38 | 626.701 | 864.847 |
| 4 | պիպերի երեսապատում գ/թիթեղով 0,55մմ օգտագործելով ապամոնտաժվածը | 100մ$^2$ | 0.102 | 107.757 | 10.991 |
| | ***<u>Մետաղական հովար</u>*** | - | - | | |
| 1 | հովարի մետաղական կարկասի մոնտաժում պրոֆպատե խողովակից աստիճանների բազրիքի հետ միասին | տն | 0.148 | 177.616 | 26.287 |
| 2 | պրոֆպատե խողովակի 50x50x3մմ արժեքը | մ | 15.5 | 2.839 | 44.005 |
| 3 | պրոֆպատե խողովակի 40x20x2մմ արժեքը | մ | 25.0 | 1.211 | 30.275 |
| 4 | պրոֆպատե խողովակի 20x20x2մմ արժեքը | մ | 19.0 | 0.780 | 14.820 |
| 5 | Կավարամածի տեղադրում /առանց փայտանյութի արժեքի / | մ$^2$ | 32.00 | 0.354 | 11.328 |
| 6 | կավարամածի փայտանյութ 50*50 | մ$^3$ | 0.15 | 164.645 | 24.697 |
| 7 | հովարի ծածկույթ ցինկապատ գ/պրոֆիլավոր թիթեղից ԿՊ-25-0.55 ճակտոնների հետ միասին | մ$^2$ | 15.4 | 5.705 | 87.857 |
| 8 | ինքնակրող պտուտակամեխ L-100մմ | հատ | 77 | 0.130 | 10.010 |
| 9 | կախովի ուղղանկյուն ջրհորդան ցինկապատ թիթեղից 0.55մմ | մ | 7.5 | 2.051 | 15.383 |
| 10 | խարսխաձողեր ամրանից Φ12 A500C | կգ | 1.35 | 0.389 | 0.525 |
| 11 | առաստաղի երեսապատում պլաստմասե գունավոր նյութով /ՊՎՔ/ հիմնակմախքի վրա | մ$^2$ | 11.0 | 6.059 | 66.649 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 շերտ | 100մ² | 0.07 | 113.331 | 7.933 |
| | *<u>Արտաքին աստիճաններ և բեքահարթակ</u>* | | | | |
| 1 | տարածքի հարթեցում ձեռքով | 100մ² | 0.18 | 22.578 | 4.064 |
| 2 | բնահողի մշակում ձեռքով | մ³ | 1.20 | 2.477 | 2.972 |
| 3 | բնահողի հետլիցք ձեռքով | մ³ | 0.60 | 1.033 | 0.620 |
| 4 | ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով | մ³ | 0.60 | 1.033 | 0.620 |
| 5 | ժապավենաձև հիմքերի կառուցում B 7.5 մակնիշի բետոնով | մ³ | 0.70 | 47.308 | 33.116 |
| 6 | ե/բետոնի պատերի իրականացում B-12,5 մակնիշի բետոնից | մ³ | 0.50 | 71.864 | 35.932 |
| 7 | խարսխաձողեր Φ6A240 | կգ | 2.5 | 0.583 | 1.458 |
| 8 | Ամրան Φ12 A500C | տն | 0.022 | 388.671 | 8.356 |
| 9 | խճի նախաշերտ | մ³ | 1.95 | 16.713 | 32.590 |
| 10 | բետոնե նախաշերտի B 7,5 մ.բ 100մմ հաստ. | մ³ | 1.00 | 36.084 | 36.084 |
| 11 | ց/ավազային հարթեց. շերտ 30մմ հաստ. | 100մ² | 0.10 | 107.941 | 10.794 |
| 12 | բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքերի վրա 200x100մմ | 100 գծմ | 0.047 | 690.566 | 32.457 |
| 13 | հավաքովի բազալտե աստիճանների տեղադրում /300x150մմ, L-1մ/ | 100 գծմ | 0.036 | 945.130 | 34.025 |
| | *<u>Կիսանկուղային հարկ</u>* | | | | |
| 1 | փայտե դռան մոնտաժում քարե պատերում օգտագործելով ապամոնտաժված շտկումներով | մ² | 1.900 | 3.088 | 5.867 |
| 2 | դռան յուղաներկում 2 շերտ | 100մ² | 0.038 | 150.799 | 5.730 |
| 3 | փայտե պատուհանի տեղադրում օգտագործելով ապամոնտաժված շտկումներով | մ² | 1.8 | 5.871 | 10.568 |
| 4 | Պատուհանի յուղաներկում 2 շերտ | 100մ² | 0.036 | 365.383 | 13.154 |
| 5 | բացվածքի պատում ուղիղ կտրվածքի տուֆ քարով օգտագործելով ապամոնտաժբածը | մ³ | 0.70 | 17.480 | 12.236 |
| 6 | պատի ց/ավազային սվաղ | մ² | 1.7 | 1.681 | 2.858 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | արտաքին շեպերի սպառում ցամաքային շաղախով | մ | 10.5 | 0.702 | 7.371 |
| | *Ներքին ջուր* | | | | |
| 1 | պոլիպրոպիլենե սառը ջրատար խողովակների տեղադրում Փ20, ձևավոր մասերի տեղադրմամբ , փորձարկումով | գծմ | 16.0 | 1.249 | 19.984 |
| 2 | պոլիպրոպիլենե ջրատար խողովակների տեղադրում տաք ջրի համար Փ20, ձևավոր մասերի տեղադրմամբ , փորձարկումով | գծմ | 12.0 | 1.497 | 17.964 |
| 3 | լվացարանի խառնիչ Փ15 | հատ | 3 | 10.246 | 30.738 |
| 4 | պոլիպրոպիլենե փական Փ 20մմ | հատ | 12 | 4.153 | 49.836 |
| 5 | ճկուն խողովակ Փ15,L-300մմ | հատ | 12 | 0.389 | 4.668 |
| 6 | էլեկտրական ջրատաքացուցիչ | հատ | 1 | 111.264 | 111.264 |
| 7 | պոլիպրոպիլենե եռաբաշխիկ | հատ | 12 | 0.168 | 2.016 |
| 8 | պոլիպրոպիլենե արմունկ | հատ | 24 | 0.084 | 2.016 |
| 9 | միացում գործող ջրագծին | հատ | 1 | 3.071 | 3.071 |
| 10 | խողովակները ամրացնող մասեր Փ20 | հատ | 26 | 0.040 | 1.040 |
| | *Ներքին կոյուղի* | | | | |
| 1 | պոլիվինիլքլորիդե խողովակ-ների տեղադրում պատի վրայով Փ 110մմ | գծմ | 5.0 | 3.384 | 16.920 |
| 2 | պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատի վրա Փ 50 . | մ | 8.0 | 2.614 | 20.912 |
| 3 | ճենապակյա կերամիկական լվացարան կանգնակով | լրակազմ | 1 | 19.500 | 19.500 |
| 4 | ճենապակյա կերամիկական լվացարան կանգնակով/մանկական/ | լրակազմ | 2 | 18.168 | 36.336 |
| 5 | Զուգարանակոնքի տեղադրում | լրակազմ | 1 | 50.613 | 50.613 |
| 6 | Զուգարանակոնքի տեղադրում/մանկական/ | լրակազմ | 2 | 43.609 | 87.218 |
| 7 | պոլիվինիլքլորիդե ստուգատեղ Փ 110 | հատ | 1 | 2.896 | 2.896 |
| 8 | պոլիվինիլքլորիդե ձևավոր մասեր Փ 110 | հատ | 4 | 2.562 | 10.248 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | պոլիվինիլքլորիդե ձևավոր մասեր Փ 50 | հատ | 4 | 2.043 | 8.172 |
| | *Ներքին լուսավորություն* | | | | |
| | Ուժային էլեկտրասարքավորումների մոնտաժում | | | | |
| 1 | Գլխավոր բաշխիչ վահան 380/220Վ,100Ա,IP44 կազմված՝ | լրակազմ | 1 | | |
| 1.1 | վահանակ պոլիստիրոլե 24մոդուլ/ 430x330x86մմ/ | հատ | 1 | 10.120 | 10.120 |
| 1.2 | եռաբևեռ ավտոմատ անջատիչ 380Վ,100Ա /ներանցման/ | հատ | 1 | 5.128 | 5.128 |
| 1.3 | միաբևեռ ավտոմատ անջատիչ Cդասի 6kA կոմուտացիոն ունակությամբ, 10Ա 220Վ/բաշխման/Cդասի | հատ | 2 | 1.074 | 2.148 |
| 1.4 | միաբևեռ ավտոմատ անջատիչ Cդասի 6kA կոմուտացիոն ունակությամբ, 25Ա 220Վ /բաշխման/ | հատ | 3 | 1.074 | 3.222 |
| 1.5 | միաբևեռ ավտոմատ անջատիչ Cդասի 6kA կոմուտացիոն ունակությամբ, 40Ա 220Վ /բաշխման/ | հատ | 1 | 1.518 | 1.518 |
| 2 | պաշտպանիչ երկբևեռ անջատման սարք 220v,40A/30mA հ/ա էլեկտրամեխանիկական | հատ | 14 | 5.182 | 72.548 |
| 3 | վարդակ երկբևեռ 3-րդ հողանցման կոնտուրով 220Վ,16Ա IP20 փակ տեղադրման | 100 հատ | 0.07 | 179.360 | 12.555 |
| 4 | տուփ անջատիչի կամ վարդակի փակ տեղադրման IP20 | 100 հատ | 0.07 | 121.157 | 8.481 |
| 5 | բաժանարար տուփ փակ տեղադրման IP20 | 100 հատ | 0.07 | 121.157 | 8.481 |
| 6 | սեղմակ հաղորդալարերի միացման 3-լարանի 32Ա»400Վ /WAGO/ | հատ | 28 | 0.389 | 10.892 |
| 7 | պղնձե ջիղերով մալուխի տեղադրում ՎՎԳ 3x2,5 մմ$^2$ | մ | 35.0 | 2.209 | 77.315 |
| 8 | պղնձե ջիղերով մալուխի տեղադրում ՎՎԳ 3x4 մմ$^2$ | մ | 35.0 | 2.509 | 87.815 |
| 9 | պղնձե ջիղերով մալուխի տեղադրում ՎՎԳ 3x6 մմ$^2$ | մ | 30.0 | 2.914 | 87.420 |
| 10 | էլեկտրական օդատաքացուցիչ | հատ | 4 | 25.911 | 103.644 |
| 11 | Պողպատ շերտավոր 40x4 | մ | 20.0 | 1.136 | 22.720 |
| 12 | Պողպատե անկյունակ L50x50x5 L=2.5 /հողանցման համար/ | հատ | 4 | 7.894 | 31.576 |
| 13 | Պղնձե հաղորդալար /հողանցման /ՊՎ 2/ 1 x 25 մմ$^2$ | 1000 | 0.20 | 196.595 | 39.319 |
| 14 | ՊՎՔ խողովակ d=25մմ/гофра/ | մ | 20.0 | 0.259 | 5.180 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15 | մալուխի պղնձե ծայրակալ 1 x 25 մմ2 հաղորդալարի | հատ | 2 | 0.259 | 0.518 |
| 16 | հեղույս մանեկ M12x40 | հատ | 2 | 0.130 | 0.260 |
| 17 | մալուխային ամրակ | հատ | 150 | 0.013 | 1.950 |
| 18 | ակոսի բացում | մ | 60.0 | 0.200 | 12.000 |
| 19 | ակոսների սվաղ գաջե շաղախով | 100 մ² | 0.015 | 263.200 | 3.948 |
| | Հողային աշխատանքներ հողանցման համար | | | | |
| 1 | բնահողի մշակում ձեռքով 0,8x325x30մ 3-րդ կարգ բնահողում | մ³ | 7.8 | 2.477 | 19.321 |
| 2 | բնահողի հետլիցք ձեռքով | մ³ | 7.8 | 1.033 | 8.057 |
| | Լուսավորության էլեկտրասարքա-վորումների մոնտաժում | | | | |
| 1 | Լուսադիոդային լուսատու LED առաստաղային IP20, 4000k, 3200lm,30w | հատ | 14 | 8.595 | 120.330 |
| 2 | Լուսադիոդային լուսատու LED առաստաղային IP65, 4000k,1900lm,18w | հատ | 8 | 6.004 | 48.032 |
| 3 | Լուսադիոդային լուսատու LED ցուցանակով պատի,IP65, ,4w,200lm, լույսային ցուցանակով ,վթարային ռեժիմով աշխատող,վթարային սնուցման բլոկով /3 ժամ/ | հատ | 2 | 7.559 | 15.118 |
| 4 | փակ լարանցման միաբևեռ մեկստեղնավոր անջատիչ 250Վ 6Ա IP20 | 100 հատ | 0.08 | 155.255 | 12.420 |
| 5 | փակ լարանցման միաբևեռ երկստեղնավոր անջատիչ 250Վ 6Ա IP20 | 100 հատ | 0.03 | 229.379 | 6.881 |
| 6 | տուփի անջատիչի փակ տեղադրման IP20 | 100 հատ | 0.11 | 121.157 | 13.327 |
| 7 | բաժանարար տուփ փակ տեղադրման IP20 | 100 հատ | 0.10 | 121.157 | 12.116 |
| 8 | սեղմակ հաղորդալարերի միացման 3-լարանի 32Ա-400Վ /WAGO/ | հատ | 40 | 0.389 | 15.560 |
| 9 | պղնձե ջիղերով մալուխի տեղադրում ՎՎԳ 3x1,5 մմ² | մ | 120.0 | 1.995 | 239.400 |
| 10 | պղնձե ջիղերով մալուխի տեղադրում ՎՎԳ 4x1,5 մմ² | մ | 60.0 | 2.099 | 125.940 |
| 11 | Պղնձե հաղորդալար ՊՎ 2 1 x 1.5 մմ² | 100մ | 0.20 | 41.386 | 8.277 |
| 12 | մալուխային ամրակ | հատ | 150 | 0.013 | 1.950 |
| 13 | ակոսի բացում | մ | 90.0 | 0.200 | 18.000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14 | ակոսների ավաղ գաջե շաղախով | 100 մ² | 0.023 | 262.895 | 6.047 |
| | *Արտաքին ջրամատակարարում* | | | | |
| 1 | 3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով | 1000մ³ | 0.010 | 693.961 | 6.940 |
| 2 | բնահողի մշակում ձեռքով | մ³ | 1.3 | 2.477 | 3.220 |
| 3 | խողովակների հիմնատակի կառուցում ավազից 100մմ | մ³ | 1.8 | 7.181 | 12.926 |
| 4 | նախաշերտ տեղի փափուկ բնահողից 100մմ | մ³ | 1.8 | 1.999 | 3.598 |
| 5 | ավազի պաշտպանիչ շերտ 200մմ | մ³ | 3.6 | 7.181 | 25.852 |
| 6 | Պոլիէթիլենային /PE100/ խողովակների տեղադրում հողի մեջ DN25 /փորձարկումով/ | մ | 59.0 | 0.611 | 36.049 |
| 7 | Պոլիէթիլենային /PE100/ խողովակների տեղադրում նկուղում DN25 /փորձարկումով/ | մ | 6.0 | 0.611 | 3.666 |
| 8 | միացում գործող ջրագծին | հատ | 1 | 3.071 | 3.071 |
| 9 | Հավաքովի ջրաչափական դիտահորի տեղադրում պոլիմերավազային հիմքով | մ³ | 0.20 | 20.556 | 4.111 |
| 10 | Հավաքովի ջրաչափական դիտահորի արժեքը պոլիմերավազային հիմքով 510x300x600մմ | հատ | 1 | 29.798 | 29.798 |
| 11 | պոլիպրոպիլենե փական Փ 25մմ | հատ | 3 | 4.276 | 12.828 |
| 12 | ջրաչափի տեղադրում Փ20մմ | հատ | 1 | 22.007 | 22.007 |
| 13 | զտիչի տեղադրում լատունե Փ20 | հատ | 1 | 2.447 | 2.447 |
| 14 | պոլիպրոպիլենե եռաբաշխիկ Փ25 | հատ | 3 | 0.168 | 0.504 |
| 15 | պոլիպրոպիլենե արմունկՓ25 | հատ | 5 | 0.084 | 0.420 |
| 16 | համակարգի ախտահանում | կմ | 0.065 | 73.321 | 4.766 |
| 17 | ավելորդ բնահողի բարձում ինքնաթափին մեխանիզմով | 1000մ³ | 0.0071 | 656.213 | 4.659 |
| 18 | Ավելորդ բնահողի տեղա-փոխում ինքնաթափով 3կմ | տն | 11.0 | 1.521 | 16.731 |
| | *Արտաքին կոյուղի* | | | | |
| 1 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ³ | 1.8 | 2.477 | 4.459 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | խողովակների հիմնատակի կառուցում ավազից 100մմ | մ$^3$ | 0.3 | 7.181 | 2.154 |
| 3 | Պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում հողի մեջ Φ110 | մ | 15.0 | 1.907 | 28.605 |
| 4 | նախաշերտ տեղի փափուկ բնահողից 100մմ | մ$^3$ | 0.3 | 1.999 | 0.600 |
| 5 | ավազի պաշտպանիչ շերտ 200մմ | մ$^3$ | 0.6 | 7.181 | 4.309 |
| 6 | փափուկ բնահողի հետլիցք ձեռքով տոփանումով | մ$^3$ | 0.6 | 1.033 | 0.620 |
| 7 | բնահողի տոփանում | մ$^3$ | 0.6 | 0.267 | 0.160 |
| 8 | ավելորդ բնահողի բարձում ձեռքով ա/ինքնաթափին | մ$^3$ | 1.2 | 1.033 | 1.240 |
| 9 | Ավելորդ բնահողի տեղա-փոխում ինքնաթափով 3կմ | տն | 1.6 | 1.521 | 2.434 |
| 10 | պոլիվինիլքլորիդե ձևավոր մասեր Φ 110 | հատ | 6 | 2.562 | 15.372 |
| 11 | պոլիվինիլքլորիդե ձևավոր մասեր Φ 50 | հատ | 3 | 2.043 | 6.129 |
| | կոյուղու կեղտաջրերի մաքրման հոր V=2մ3 | | | | |
| 1 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ$^3$ | 6.0 | 2.477 | 14.862 |
| 2 | բնահողի փռում տեղում ձեռքով | մ$^3$ | 6.0 | 1.033 | 6.198 |
| 3 | Միաձույլ խամքարա-բետոնե հիմքերի կառուցում B 7.5 բետոնով | մ$^3$ | 0.42 | 37.007 | 15.543 |
| 4 | Միաձույլ խամքարա-բետոնե պատի կառուցում B 7.5 բետոնով | մ$^3$ | 1.5 | 37.752 | 56.250 |
| 5 | բնահողի տոփանում խճով | 100մ$^2$ | 0.01 | 38.124 | 0.381 |
| 6 | Բետոնե հատակի կառուցում բետոն Կ-7.5 | մ$^3$ | 0.1 | 35.251 | 3.525 |
| 7 | Միաձույլ ե/բ սալի կառուցում B 15 մ.բ. | մ$^3$ | 0.15 | 70.446 | 10.567 |
| 8 | Ամրան Φ14A500C | տն | 0.0167 | 388.766 | 6.492 |
| 9 | Ամրան Φ8 A240 | տն | 0.0037 | 583.006 | 2.157 |
| 10 | պողպատե մտոցի տեղադրում 0,6x 0,6 մ | հատ | 1 | 41.010 | 41.010 |
| | *Ընդամենը* | | | | 6976.000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *ԱԱՀ 20%* | | | | 1395.200 |
| | *Ընդամենը* | | | | 8371.200 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակի համայնքապետարան
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242001452
Համայնքի ղեկավար՝ Ք. Նիկողոսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՍՏՐՈԼԱԲ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Համբարձումյան 13/104
ՀՎՀՀ 06956366
Հ/Հ 2051422106291001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

---------------------------------
Ա. Մելիքյան

Կ.Տ.

Հավելված թիվ 2
«13» հունվար 2023թ. Կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/44 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԱՅԻՆ ՄԱՍԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ-ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 45461100 | Սպիտակ համայնքի Նոր Խաչակապ բնակավայրի վարչական շենքի մանկապարտեզային մասի վերանորոգման-արդիականացման աշխատանքներ: | դրամ | 8 371 200 | 1 | *Գ. Նոր Խաչակապ 2-րդ փողոց, թիվ 26/1* | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 180-րդ օրացուցային օրը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Սպիտակի համայնքապետարան
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242001452
Համայնքի ղեկավար՝ Ք. Նիկողոսյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԱՍՏՐՈԼԱԲ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Համբարձումյան 13/104
ՀՎՀՀ 06956366
Հ/Հ 205142210629 1001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
------------------------------
Ա. Մելիքյան
Կ.Տ.